



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՅԱՆՇՆԱԺՈՂՈՎ**

**ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ**

**“Հայաստանի էլեկտրական ցանցեր” ՓԲԸ-ի 2014 թվականի  
գնումների առանձին գործարքների մոնիթորինգի արդյունքները**

**ԵՐԵՎԱՆ 2015**

Նախաբան.....	3
1. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔԻ ԱՄՓՈՓ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ.....	4
2. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԲԸ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐԸ .....	5
3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԴԻՏԱՐԿՎԱԾ .....	
ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	7
4. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԲԸ .....	
2014 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ.....	
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ .....	8

## ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով)՝ համաձայն 2014 թվականի հունիսի 25-ի №207Ս որոշման №1 հավելվածով հաստատված՝ հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգի՝ իրականացրել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև ընկերություն) գնումների առանձին գործարքների մոնիթորինգ:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի գնումների առանձին գործարքների մոնիթորինգն իրականացվել է գնումների գործընթացի՝ հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ս որոշմամբ սահմանված լրացուցիչ պահանջներին (այսուհետ՝ լրացուցիչ պահանջներ) համապատասխանությունը գնահատելու նպատակով: Այդ նպատակով ընտրվել են 2014 թվականին իրականացված պատահական 12 գործարքներ, որոնք դիտարկվել են տարբեր տեսանկյուններից, մասնավորապես.

- 1) ընկերության կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրության մոնիթորինգը և գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրության մոնիթորինգը,
- 2) մրցութային փաստաթղթերի մոնիթորինգը,
- 3) մատակարարի ընտրության ընթացակարգի մոնիթորինգը:

Գնումների առանձին գործարքների մոնիթորինգն իրականացվել է՝ հիմնվելով ընկերության կողմից հանձնաժողով ներկայացվող գնումների վերաբերյալ եռամսյակային հաշվետվությունների, գնումներին վերաբերող փաստաթղթերի ուսումնասիրության, ինչպես նաև հանձնաժողովի աշխատակազմի կողմից կատարված դիտարկումների արդյունքների հիման վրա:

Սույն վերլուծական տեղեկանքն ընդհանուր առմամբ կազմված է նախաբանից և 4 հիմնական գլուխներից: Վերլուծական տեղեկանքում ներկայացված են ընկերության 2014 թվականի գնումների ընդհանուր նկարագիրը, դիտարկված գործարքների մասին ամփոփ տվյալները, և ամփոփիչ եզրակացությունները և առաջարկությունները:


## 1. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔԻ ԱՍՓՈՓ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մույն վերլուծական տեղեկանքը կազմել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2014 թվականի գնումների առանձին գործարքների ուսումնասիրության, դրանց իրականացման արդյունքում ընկերության կողմից “հատուցման դիմաց արժեքի” հասած լինելու հանգամանքը գնահատելու նպատակով: Այս համատեքստում հարկ ենք համարում նշել, որ կարգավորվող ընկերությունների գնումների գործընթացի՝ հանձնաժողովի կողմից կարգավորման և դրա հետագա մոնիթորինգի նպատակը ընկերությունների կողմից լիցենզավորված գործունեության իրականացման նպատակով ծախսվող միջոցների արդյունավետության բարձրացումն է, քանի որ դրանք ազդում են սպառողներին առաքվող էներգակիրների սակագների վրա: Այս առումով հիմնաքարային է գնումների բոլոր գործարքներում՝ անկախ ընտրված ընթացակարգերից, “հատուցման դիմաց արժեքին” հասնելու ուղղությամբ ընկերության կողմից ձեռնարկված քայլերը ինչպես մինչև գնումների իրականացումը՝ դրանց պլանավորման փուլում, այնպես էլ իրականացման ընթացքում, նաև արդեն իսկ ձեռք բերված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ընդունման փուլերում: Ընդ որում, հարկ է նշել, որ ոչ միշտ են ընկերությունների կողմից առաջին հայացքից մրցակցային թվացող ընթացակարգերը ապահովում “հատուցման դիմաց արժեքի” սկզբունքը, քանի որ նույն ժամանակ ընկերությունները կիրառվում են այլ սահմանափակումներ, որոնք խաթարում կամ վատթարացնում են մրցակցությունը: Մույն վերլուծական տեղեկանքում գնումների առանձին գործարքները փորձ է արվել դիտարկել վերը նշված բոլոր գործոնների համատեքստում, ինչպես նաև ներկայացնել համապատասխան առաջարկություններ դրանց հետագա բարելավման նպատակով:

**2. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԲԸ  
2014 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԱՍՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն 2014 թվականի ընթացքում իրականացրել է 14, 4 մլրդ դրամ գնումներ (առանց ԱԱՀ<sup>1</sup>): Գնումներն իրականացվել են ինչպես ապրանքների, այնպես էլ աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման նպատակով: Ընդհանուր գնումների ծավալի 54%-ը (7,8 մլրդ դրամ) բաժին է ընկել աշխատանքներին և ծառայություններին, իսկ 46%-ը (6,6 մլրդ դրամ)՝ ապրանքներին: Գնումների իրականացման նպատակով ընկերության կողմից կիրառվել են տարբեր ընթացակարգեր՝ մրցույթներ, առաջարկների բաց և փակ հարցումներ, միակ աղբյուրից գնումներ և ուղղակի գնումներ: Ստորև գրաֆիկական տեսքով (Գրաֆիկ 1) ներկայացված է 2014 թվականին ընկերության կողմից իրականացված գնումների ծավալի բաշխումը նշված ընթացակարգերի միջև:

**2014 թվականին փաստացի կատարված գնումների ծավալը ըստ ընթացակարգերի տիպերի**




Ներկայացված գրաֆիկական պատկերը ցույց է տալիս, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն տարբեր մրցակցային եղանակների կիրառմամբ իրականացրել է գնումների 62%-ը, իսկ ոչ մրցակցային եղանակով՝ 38%-ը: Կարծում ենք, որ ոչ մրցակցային եղանակով իրականացված գնումների նման մեծ ծավալը՝ շուրջ 5,5 մլրդ դրամ, չի կարող համարվել բնականոն և անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել նման գնումների ծավալը էականորեն նվազեցնելու ուղղությամբ: Այնուամենայնիվ, գնումների գործարքների բաշխումը ըստ ընթացակարգերի առավել

<sup>1</sup> Սույն վերլուծական տեղեկանքում ներկայացված բոլոր թվերը չեն ներառում ԱԱՀ:


մանրամասն դիտարկելու նպատակով, ստորև այն ներկայացված է առանձին ապրանքների և աշխատանքների ու ծառայությունների դեպքում:

**2014 թվականին փաստացի կատարված գնումների ծավալը ըստ ընթացակարգերի՝ ապրանքների դեպքում**



**ԳՐԱՖԻԿ 2**

**2014 թվականին փաստացի կատարված գնումների ծավալը ըստ աշխատանքների և ծառայությունների դեպքում**




**ԳՐԱՖԻԿ 3**

Ինչպես տեսնում ենք հաջորդ գրաֆիկական պատկերից, ապրանքների դեպքում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն տարբեր մրցակցային եղանակների կիրառմամբ իրականացրել է գնումների 77%-ը, իսկ ոչ մրցակցային եղանակով՝ 23%-ը: Ինչ վերաբերում է աշխատանքներին և ծառայություններին (Գրաֆիկ 3), ապա մրցակցային եղանակների կիրառմամբ իրականացված գնումները կազմել են 48%-ը, իսկ ոչ մրցակցային եղանակով՝ 52%-ը: Եվ ապրանքների և աշխատանքների ու ծառայությունների ձեռքբերման դեպքում անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել ոչ մրցակցային գնումների ծավալը էականորեն նվազեցնելու ուղղությամբ:

### 3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԴԻՏԱՐԿՎԱԾ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Մոնիթորինգի իրականացման նպատակով ընկերության 2014 թվականի ընթացքում կատարված գործարքներից պատահականության սկզբունքով հանձնաժողովն առանձնացրել է 12 առանձին գործարքներ և 2015 թվականի հունիսի 5-ի ՇԿ-1140Լ գրությամբ խնդրել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին ներկայացնել նշված գործարքների հետ կապված մրցութային փաստաթղթերը: Նշված 12 գործարքներից 10-ը հանդիսացել են մրցութային, իսկ 2-ը առաջարկների փակ հարցմանն առնչվող գործարքներ:

Հանձնաժողովի կողմից ընտրված գործարքների ընդհանուր արժեքը կազմել է շուրջ 3,4 մլրդ դրամ՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից իրականացված գործարքների շուրջ 24%-ը: Ստորև գրաֆիկական պատկերի տեսքով առավել մանրամասն ներկայացված են դիտարկված գնումների գործարքների համամասնությունները ըստ ընթացակարգերի տիպերի:



Վերը նշված համամասնություններից կարելի է ենթադրել, որ իրականացված մոնիթորինգի արդյունքները հիմնականում բնութագրական են ընկերության բոլոր գնումների համար:

4. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԲԸ  
2014 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ  
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Մոնիթորինգի իրականացման հիմքը` ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 25-ի №207Ս որոշման №1 հավելվածով հաստատված` հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգ:

Մոնիթորինգի օբյեկտը` «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ:

Մոնիթորինգի նպատակը` «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից կատարված գնումների առանձին գործարքների արդյունավետության ուսումնասիրություն և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ս որոշմամբ սահմանված լրացուցիչ պահանջներին համապատասխանության գնահատում:

Մոնիթորինգի իրականացման ժամկետը` 2015 թվականի հուլիսի 1-ից մինչև 2015 թվականի հոկտեմբերի 1-ը:

Մոնիթորինգի մեթոդաբանությունը` «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի գնումների առանձին գործարքների մոնիթորինգն իրականացվել է ընկերության կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրության, գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարի ընտրության ընթացակարգի մոնիթորինգի միջոցով:

Մոնիթորինգի առարկան` «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից իրականացված գնումների առանձին գործարքները, մասնավորապես`

1. Փայտյա հենասյուների մատակարարման մրցույթ
2. Տրանսֆորմատորային յուղի մատակարարման մրցույթ
3. Երկաթբետոնե հենասյուների, դրոցների, լայնակների
4. Մուտքային բաշխիչ սարքավորումների և բաշխիչ վահանների մատակարարման մրցույթ
5. 6(10)կՎ ուժային մալուխի մատակարարման մրցույթ
6. Ինքնատար մեկուսացված հաղորդալարի մատակարարման մրցույթ
7. ՄԻՊ հաղորդալարերի ամրանների մատակարարման մրցույթ



8. ՄԻՊ հաղորդալարերի ամրանների մատակարարման լրացուցիչ համաձայնագիր
9. Եռաֆազ էլեկտրոնային հաշվիչների մատակարարման մրցույթ
10. Ավտոմատ անջատիչների մատակարարման մրցույթ
11. Գուսան Շերամի 140/8 հասցեում գտնվող բնակելի թաղամասի էլեկտրամատակարարման աշխատանքների կատարման առաջարկների փակ հարցում
12. Ծարավ աղբյուրի 55/8 և 55/17 հասցեներում կառուցվող բազմաբնակարան շենքերի էլեկտրամատակարարման աշխատանքների կատարման առաջարկների փակ հարցում

Ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ վերոնշյալ 12 գործարքներում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն գնումների իրականացման ընթացակարգերը, ընդհանուր առմամբ, պատշաճ մակարդակով չի կազմակերպել: Մոնիթորինգի ընթացքում ի հայտ են եկել տարբեր բնույթի խնդիրներ, որոնցից յուրաքանչյուրը իր բացասական ազդեցությունն է թողել գնումների ընդհանուր արդյունավետության վրա:

Մրցույթների կազմակերպման ընթացքում ի հայտ եկած հիմնական թերությունները ամփոփ ներկայացված են ստորև.

1. Մատակարարման պայմանագրով սահմանվել են վճարման ոչ ողջամիտ ժամկետներ: Մեծամասամբ սահմանված է վճարման ժամկետ հանձման-ընդունման ակտի ստորագրումից և մատակարարի կողմից ստորագրված հաշիվ-ապրանքագիր ներկայացնելուց հետո 90 բանկային օրվանից ոչ ուշ, բայց ոչ շուտ, քան վճարման ենթակա ամսվա 26-ը: Նշված ժամկետը մատակարարների մոտ առաջացնում է լրացուցիչ վարկային միջոցներ ներգրավվելու անհրաժեշտություն, ինչը հանգեցնում է ապրանքի թանկացման: Եթե տեղական շուկայում կարճաժամկետ վարկի միջին տոկոսադրույքը ընդունենք 18%, ապա առնվազն 6%-ի չափով կբարձրանան մատակարարվող ապրանքների գները: Այս հանգամանքը սահմանափակում է նաև արտադրողների և մատակարարների մասնակցությունը:

2. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն չի ներկայացրել համապատասխան փաստաթղթեր՝ ընկերության կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրության վերաբերյալ՝ պահանջվող ապրանքների բոլոր հնարավոր խոշոր մատակարարներին հայտնաբերելու, նրանց առաջարկությունների, գնման առարկայի որակի, գնային տիրույթի, ինչպես նաև հաճախորդների կարծիքներն ուսումնասիրելու վերաբերյալ տեղեկատվություն ստանալու, և, ի վերջո, գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ճիշտ ընտրություն կատարելու նպատակով: Ընկերությունը պետք է գրանցեր շուկայի ուսումնասիրության արդյունքները, որոնք կդառնային գնման գործարքի վերաբերյալ փաստաթղթերի անբաժանելի մաս: Նշված հանգամանքը հաշվի առնելով՝ հանձնաժողովը փորձել է ինքնուրույն գնահատել շուկայում առկա գները՝ պարզելու պայմանագրային և շուկայական գների տարբերությունը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն շատ դեպքերում անհրաժեշտ ապրանքը ձեռք է բերել շուկայականից ավելի բարձր գնով, և չի ապահովվել հատուցման դիմաց արժեքի սկզբունքը:
3. Ընկերությունը պատշաճ մակարդակով չի իրականացրել գնումների կանխատեսում՝ ըստ գնվող ապրանքների իրական ծավալների և մատակարարման ժամկետների: Հայտարարել է մրցույթ, սակայն նույն ժամանակահատվածում «մեկ աղբյուրից» գնման ընթացակարգով ձեռք է բերել նույն ապրանքի լրացուցիչ խմբաքանակ:
4. Շատ դեպքերում ընկերությունը սահմանափակվել է մրցույթն անցկացնելու վերաբերյալ տեղեկատվությունն իր վեբ կայքում և գնումների էլեկտրոնային տեղեկատուում հրապարակելով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ապրանքները հիմնականում ներկրվում են արտերկրից՝ առավելապես ռուսական շուկայից, հանձնաժողովը գտնում է, որ գնման գործընթացի արդյունավետ իրականացման նպատակով անհրաժեշտ է չսահմանափակվել մրցույթը ընկերության վեբ կայքում և գնումների էլեկտրոնային տեղեկատուում հրապարակելով, այլ պետք է մասնակցության հրավեր ուղարկել և տեղեկացնել բուն արտադրող ընկերություններին:

5. Գնման պայմանագրերը կատարվել են թերի, մատակարարները մատակարարումն իրականացրել են պայմանագրով ամրագրված ժամանակացույցից որոշակի շեղումներով և ոչ լրիվ խմբաքանակով: Անբարեխիղճ մատակարարների նկատմամբ չի կիրառել որևէ պատժամիջոց, ինչպես օրինակ՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների «Սև» ցուցակում ընդգրկելը կամ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքի սահմանափակումը: Սա ևս խոչընդոտ է գնումների գործընթացի արդյունավետ կազմակերպման տեսանկյունից:

6. Գնման ընթացակարգերի փաստաթղթերը և ապրանքների տեխնիկական բնութագրերը առանձին դեպքերում կազմվել են թերություններով, մասնավորապես, որոշ մրցութային փաստաթղթերում ապրանքների տեխնիկական բնութագրերը լիարժեք չեն: Բացակայում են ապրանքը բնութագրող կարևոր առանձնահատկություններ, որոնք կողմնորոշիչ են գնային առաջարկ ներկայացնելու և մրցույթին բարձր մասնակցություն ապահովելու հարցում:

Վերը նշված բազմաթիվ խնդիրները վկայում են, որ գնումների գործընթացն «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ում էական բարելավման կարիք ունի: Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու գնումների գործընթացի արդյունավետության բարձրացման և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների պահպանումը:

Հավելենք նաև, որ գնումների գործընթացի թերի կազմակերպման արդյունքում շուկայականից բարձր գներով ձեռք բերված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքները (շուկայական գները գերազանցող չափով) հաշվի չեն առնվի ընկերության սակագներում: